ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 սեպտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

130
(2796)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՇՈՒԿԱՅԻ ԽԱՅՏԱՌԱԿ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԿՈՏՈԼՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Հայաստանում ապրանքաշրջանառության եւ շուկայի քաոսային վիճակը, ըստ տնտեսագետների, համապատասխան մարմինների անգործության հետեւանք է: Հենց այդ մարմիններից մեկը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, ղեկավարում է Արմեն Կոտոլյանը: Հայկական շուկայի նվազ վաճառքի պատճառով եւ 20-30 տնտեսվարողի շնորհիվ փակվեց Wildberries-ի՝ ռուսական տարբերակով պատվերների հնարավորությունը: Ըստ որոշ վերլուծությունների՝ շուկան որոշ ժամանակ կմնա կայուն, եւ գուցե բավարար չափով ապրանքաշրջանառություն չլինի, ինչը կնվազեցնի պահանջարկը եւ, հնարավոր է, առաջացնի գնանկում: Շուկայում առկա հաջորդ խնդիրը վառելիքի գների կտրուկ աճն է, որը տեսչական մարմինը եւս չի վերահսկում: Բենզինի, գազի եւ հեղուկ գազի գները վերջին երկու օրերին աճել են: Ըստ տնտեսագետների՝ դրա պատճառը իշխանության հովանավորչության տակ գտնվող անձանց ազդեցությունն է շուկայում, իսկ հենց այդ իշխանությունը իր մարդկանց է տալիս շուկայում արտոնություններ: Սրանք եզրակացություններ են, որոնք անում են տնտեսագետները եւ տնտեսվարողները, սակայն ոչ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը կամ ՏՄՊՊՀ-ն: Այսպիսով, ո՞վ է ղեկավարում այս տեսչական մարմինը, եւ ի՞նչ ունեցվածք ունի նա. կառույցը 2018 թվականի հեղափոխությունից հետո ղեկավարում է Արմեն Կոտոլյանը: Կոտոլյանը հայտարարագրել է 2 հողամաս Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում: Նա հայտարարագրել է հիփոթեքով ձեռք բերված բնակարան եւ ավտոկայանատեղի: Նա տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, ըստ երեւույթին, ծառայողական մեքենա է շահագործում: Նրա հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմում են 13 մլն 496 հազար դրամ: Կոտոլյանը, որպես թանկարժեք իր, որի արժեքը 4 միլիոն է կամ գերազանցում է դրան, հայտարարագրել է ժամացույց, որը ժառանգություն է, իսկ արժեքը նշված չէ: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 826 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 5 մլն դրամ: Արմեն Կոտոլյանի՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 24 մլն 836 հազար դրամ: Տարեկան եկամուտներից 13 մլն 669 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ վարչապետի աշխատակազմից, իսկ 612 հազարը աշխատանքի վարձատրություն է Երեւանի քաղաքապետարանից, 388 հազար դրամը՝ որպես այլ եկամուտ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայից, 445 հազարը ՀՀ պետական եկամուտների կոմիտեից է՝ որպես եկամտահարկի վերադարձ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը կազմում է 9 մլն 883 հազար դրամ: Կոտոլյանի՝ վարկի մարմանն ուղղված վճարները կազմել են 6 մլն 831 հազար դրամ, իսկ անշարժ գույքի վերանորոգմանը հատկացրել է 10 մլն 200 հազար դրամ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Կոտոլյանի հետ համատեղ բնակվող Ռուզաննա Կոտոլյանը հայտարարագրել է 1 հողամաս, 1 հողին ամրակցված անշարժ գույք, որոնք համատեղ սեփականությամբ ձեռք է բերել 2021 թվականին, եւ 1 միանձնյա սեփականությամբ բնակարան: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 297 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտը՝ 3 մլն 550 հազար դրամ, որից 2 մլն 550 հազարը աշխատանքի վարձատրություն է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ից (որտեղ Արմեն Կոտոլյանը նախկինում աշխատել է որպես առաջատար ինժեներ), իսկ 178 հազար դրամը Ռուսաստանից ստացված կենսաթոշակային ֆոնդն է:

Օդում կախված վտանգ կա Նիկոլ Փաշինյանի իշխանության գլխին. այս մասին խոսում են եւ իշխանությունները, եւ ընդդիմությունը, եւ հանրության լայն շերտերը: Որտեղից է վտանգը՝ դեռ տեսանելի չէ, բայց փաստ է, որ ընդդիմադիրների մոտ սպասումներ կան, Նիկոլ Փաշինյանի ու թիմակիցների մոտ անհանգստություն ու վախ կա, իսկ լայն հանրությունը սպասում է, թե ով ումով կփոխարինվի առաջիկայում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը հրահանգել է բոլոր թիմակիցներին (նախարարներ, պատգամավորներ, կուսակցության վարչության մյուս անդամներ), որպեսզի մեկ մարդու նման սկսեն նամակներ գրել, զանգահարել միջազգային գործընկերներին եւ հայտնել, որ Ռուսաստանի Դաշնությունը մտադիր է Հայաստանում իշխանափոխություն անել, եւ որ իրենք ունեն օգնության կարիք: Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանն էլի Արեւմուտքից փորձում է աջակցություն ստանալ, պահպանել իր իշխանությունը՝ վախեցնելով, թե իրեն փոխարինելու կգա Հայաստանում պրոռուսական ուժ կամ գործիչ: Հիմա ողջ թիմը, քարոզարշավին, ձայներ հավաքելուն զուգահեռ, նաեւ նամակներով ու զանգերով է զբաղված, որպեսզի տարբեր մայրաքաղաքներին բացատրեն, որ Նիկոլ Փաշինյանի հեռանալը նշանակում է, որ Ռուսաստանի Դաշնությունը կուժեղանա Հայաստանում: Տեղեկացանք նաեւ, որ դիվանագիտական կորպուսն էլ է ստացել հրահանգ, որպեսզի տարբեր խողովակներով տեղեկացնեն տարբեր երկրների իշխանություններին, թե ինչ վտանգներ կան Փաշինյանի իշխանության գլխին:

Երեւանի քաղաքապետի թեկնածու Հայկ Մարությանը հրաժարվել է երեկ մասնակցել Հանրայինի կազմակերպած հեռուստաբանավեճին: Իհարկե, փաստարկն այն է, որ նա կարծում է, որ Պետրոս Ղազարյանն ի վիճակի չէ հավասար պայմաններ ապահովել բոլոր կողմերի համար, եւ բանավեճը օբյեկտիվ չի լինելու: Իրականում գուցե կա այդպիսի խնդիր, բայց բանավեճից հրաժարվելը, միեւնույնն է, լայն հանրության կողմից ընկալվեց որպես թուլության նշան: Ստացվում է, որ Հայկ Մարությանն անկարող է պաշտպանվել, ներկայացնել իր դիրքորոշումները, հակափաստարկները, մինչդեռ նրա դերասանական տաղանդը հենց այդտեղ էր պետք գալու: Եղածն արդեն եղած է: Ամեն դեպքում, նրա կողմից դատարկ թողնված տաղավարը կնշանակի, որ Մարությանը, որ խոսում էր, թե իրեն արգելվել կամ խոչընդոտվել է իրականացնել ծրագրերը, որ շատ աշխատանքներ մնացել են կիսատ ոչ թե իր, այլ իշխանությունների մեղքով, այլեւս համոզիչ չի լինի: Նա, ի վերջո, կարող էր ողջ ճշմարտությունը իշխանության երեսով տալ հենց ուղիղ եթերում:

Արդարադատության նախարարությունը ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի մասով գործընթաց է սկսել: Երեկ նախարար Գրիգոր Մինասյանը նշեց, որ «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումից հետո Արդարադատության նախարարության վերահսկողական վարչությունը դեպքի վերաբերյալ 07.08.2023 թվականին ծառայողական քննություն է սկսել: Քննության արդյունքները դեռ չկան: Իսկ ի՞նչ դեպքի մասին է խոսքը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության արդեն նախկին պետ Սերգեյ Ատոմյանի հեռացումը առաջին հերթին կապված է ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի հետ: Մասնավորապես, գրել էինք, որ օգոստոսի 1-ին, երբ ԱԱԾ մեկուսարանից պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին տեղափոխել են Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի նիստին, ճանապարհին Դավիթ Տոնոյանը խնդրել է ուղեկցողներին, որ թույլ տան կարճ տեսակցել մորը, հետո շարունակել ճանապարհը դեպի Ազգային ժողով: Տոնոյանին ուղեկցող ծառայողները կապ են հաստատել Սերգեյ Ատոմյանի հետ՝ թույլտվություն ստանալու համար: ՔԿՀ պետը թույլ է տվել, որ Տոնոյանը գնա տուն ու տեսակցի մորը՝ պայմանով, որ ոչ ոք չիմանա: Ասել է թե՝ նախարարությունում ստուգում են, թե ինչպես է կալանքի տակ գտնվող նախկին նախարարը գնացել տուն: Հիշեցնենք, որ օգոստոսի 5-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, Սերգեյ Ատոմյանն ազատվեց Քրեակատարողական ծառայության պետի պաշտոնից, որը զբաղեցնում էր 2021 թվականի սեպտեմբերի 15-ից: Ի դեպ, դեռեւս ՔԿ ծառայության պետի պաշտոնը դատարկ է, ու չեն կարողանում թեկնածու գտնել:

ԶՐՈՒՅՑ

ՏԻԳՐԱՆ ԱՐԶԱՔԱՆՑՅԱՆԸ՝ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

«Ուժը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանին քարոզարշավի ժամանակ ընտրողը ոչխար էր անվանել, ինչին ի պատասխան՝ Արզաքանցյանն ասել էր. «Ոչխարը դու ես. ես քո չոբանն եմ»: Այս միջադեպի առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հարց է ուղղել Տիգրան Արզաքանցյանին:

-Ձեր թույլտվությամբ, պարոն Արզաքանցյան, կուզեմ խոսենք միջադեպի մասին, որը հայտնվեց համացանցում. ո՞վ Ձեր քարոզարշավի ժամանակ վիրավորեց Ձեզ, որին տեղում պատասխանեցիք դուք: Պարզե՞լ եք՝ ով էր:

-Այո, պարզել ենք: Ուրեմն, ամեն ինչ այսպես սկսվեց. այդ օրը առավոտյան մենք շուկայում էինք, ինքը եկավ մեզ մոտ, ներկայացավ որպես «Դոգի զոմբի», ասաց՝ ես «Դոգի զոմբին եմ», պատասխանեցի, որ դա ձեր գործն է, Ձեր իրավունքը, ինչ ուզում եք, արեք: Դրանից հետո մենք Կոմիտաս փողոցի վրա բակային հանդիպումներ արեցինք, վերջացրինք , նստեցինք մեքենաները, որ գնանք, այդ ժամանակ էլ ինքը վիրավորեց: Դե ես էլ ի՞նչ պետք է անեի: Մարդիկ երբ վիրավորում են, անպատիվ խոսքեր են ասում, մոռանում են որ դա իրենց ներսի հայելին է, իրենց շողքն է, իրենք իրենց են դրանով ցույց տալիս: Երբ ինքն այդ կենդանու անունը տվեց, ես էլ պատասխանեցի, որ նման դեպքում ես էլ կարող եմ դառնալ հովիվը՝ տիրապետելով նման կենդանիներին:

Մեկ անգամ կարող ես լռել, երկրորդ անգամ, բայց մենք էլ ենք մարդ: Իհարկե, կարող ենք արհամարհել, բայց անընդհատ լսել նման մեկնաբանություններ անհնար է:

-Ձեզ չպատասխանե՞ց, երբ Դուք ասացիք, որ կարող եք իր հովիվը լինել, ամեն ինչ հենց այնպես սահմանափակվե՞ց:

-Այո, սահմանափակվեց:

-Պարոն Արզաքանցյան, ամուսիններով եք քարոզարշավ անում՝ թանկարժեք մեքենայից չիջնելով: Կընտրե՞ն Ձեզ, ի՞նչ եք կարծում:

-Թանկարժեք մեքենայից իջնում ենք, ես դպրոցն ավարտելուց հետո ունեցել եմ մեքենա, բանակից հետո էլ եմ ունեցել, միշտ էլ ունեցել եմ տարբեր մեքենաներ: Հանրության մեջ մենք գալիս ենք, մեքենան կանգնեցնում ենք, ման ենք գալիս, ժողովրդի հետ շփվում ենք, հանդիպումներ ենք ունենում բակերում, տարբեր կազմակերպություններում, ընկերություններում: Երբ գնում ենք մի տեղից մյուսը, միայն այդ ժամանակ ենք մեքենայից իրազեկում տարբեր վարչական շրջաններում:

Մենք համ մեքենայով ենք քարոզարշավ անում, համ ոտքով:

-Պարոն Արզաքանցյան, ի վերջո, ըստ Ձեզ, վստահության քվե կտամ՞ն քաղաքացիները Ձեզ:

-Չգիտեմ: Ամենակարեւորը՝ քարոզարշավն ու ընտրությունները արդար ու թափանցիկ անցնեն, առանց վեճի, առանց վիրավորանքների, բայց տարբեր մարդկանց կողմից օգտագործված պետական լծակներն ու խախտելը կանոնները հաճելի բան չէ:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՕՐԸ ⇨

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանն իր քարոզարշավի վերջին օրը կեզրափակի բակային այցով:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Ազգային առաջընթաց»-ը քարոզարշավի վերջին օրը լինելու է Կենտրոն վարչական շրջանում:

Մարությանի նախընտրական շտաբի մամուլի քարտուղարից հետաքրքրվեցինք՝ հնարավոր է արդյոք՝ իրենք էլ վաղը հանրահավաք անեն: «Ոչ, հանրահավաք չի լինելու, կսահմանափակվենք միայն բակային այցով»,-ասաց նա:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ գրել էր, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը մտադիր չէ պահպանել ավագանու իր մանդատը եւ քաղաքապետ չընտրվելու պարագայում պատրաստվում է հրաժարվել դրանից ու անցնել իր սիրելի գործին՝ դերասանությամբ գումար աշխատելուն:

Կուբաթյանից փորձեցինք ճշտել նաեւ այս տեղեկությունը, սակայն նա հրաժարվեց որեւէ մեկնաբանություն տալ:

ՔՊ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Hraparak.am-ը գրում է. «Իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը պարբերաբար ներքին հարցումներ է անցկացնում, նաեւ՝ ուժայիններ միջոցով: Նման հարցումներ միշտ են անցկացվում. ԱԱԾ-ն հատուկ մեթոդոլոգիա ունի տարբեր թեմաներով հարցումներ անելու, որոնց մասին անգամ հարցվողները չեն իմանում: Ավելի հաճախ դրանք ռեյտինգներ չափելու համար են արվում, եւ դրանով իշխանությունը փորձում է հասկանալ, թե հասարակության որ մասի վստահությունն է վայելում: Ընտրությունների նախօրեին, բնականաբար, հարցումներն արվում են ընտրությունների հավանական արդյունքները գնահատելու նպատակով:

Վերջին հարցումներն ուղղված են Երեւանի ավագանու ընտրությունների հավանական արդյունքներին: Ըստ այդմ՝ այս անգամվա հարցումների արդյունքներով՝ չնայած առաջատարը ՔՊ-ն է, սակայն ուժային կառույցներն ահազանգել են, որ իշխող կուսակցության գործերն այնքան էլ լավ չեն, եւ աշխատելու դեռ շատ տեղ կա. պետք է վերջին օրերին քրտնաջան աշխատել, որ ցանկալի արդյունքին մոտենալու հույս ունենան: Ըստ այդ հարցումների՝ որեւէ ուժ չի կարողանալու հավաքել 50+ ձայն, որպեսզի քաղաքապետ ընտրի եւ Երեւանում իշխանություն ձեւավորի:

Ինչ վերաբերում է մյուս ուժերին, ապա մոտավոր պատկերն, ըստ իշխանական հարցումների, այսպիսին է. Տիգրան Ավինյան, Հայկ Մարության, Մանե Թանդիլյան, 4-րդ տեղում քվեաթերթիկի 4-րդ համար Վիկտոր Մնացականյանն է՝ «Հաղթանակ» կուսակցությունով:

Այնուհետեւ կրնկակոխ իրար հետեւից մի քանի ուժ են գալիս՝ «Հանրային ձայնը» եւ Անդրանիկ Թեւանյանի «Մայր Հայաստանը»»:

ՔԱՅԼԵՐԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ ԵՆ

Իշխանության ներսում անտեղյակ են միմյանց քայլերից ու հայտարարություններից: Այն, որ Ադրբեջանի հետ բանակցությունները հայրենի իշխանությունները խիստ գաղտնի են վարում, միայն Նիկոլ Փաշինյանն ու արտգործնախարարն են բանակցային մանրամասներին տիրապետում, գաղտնիք չէ, բայց որ իշխանական ոլորտի պատասխանատու պատգամավորներն այսքան անտեղյակ են բանակցություններից, սա իսկապես, մեղմ ասած, տարօրինակ է: «Ժողովուրդ» օրաթերթն արձանագրել է, որ մեկ օրվա մեջ բանակցային գործընթացի համար պատասխանատու երկու անձինք՝ արտգործնախարար Արարատ Միրզոյանը եւ ԱԺ արտաքին հարցերի մշտական հանձնաժողովի ղեկավար Սարգիս Խանդանյանը, խիստ իրարամերժ հայտարարություններ են անում: Այսպիսով, դեռ նախորդ ամիս՝ օգոստոսի 25-ին տեղի ունեցած Կառավարության նիստի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտնել էր, որ հայկական կողմը ադրբեջանական կողմին է փոխանցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի վերաբերյալ իր նոր առաջարկները: ՔՊ-ական պատգամավոր Սարգիս Խանդանյանն էլ իր հերթին երեկ լրագրողների հետ զրույցում, խոսելով հայկական կողմի փոխանցած առաջարկներից, հայտարարեց, թե Ադրբեջանը դեռեւս չի արձագանքել խաղաղության պայմանագրի վերաբերյալ Հայաստանի նոր առաջարկներին: Մինչդեռ, Խանդանյանի հայտարարությունից ընդամենը ժամեր անց՝ ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ, արտգործնախարար Արարատ Միրզոյանը ամբողջովին հակառակը հայտարարեց: Միրզոյանի խոսքով՝ հայկական կողմն ընդամենը երկու օր առաջ ստացել է ադրբեջանական կողմի առաջարկները: «Գործընթաց կա, քննարկում կա: Կրկին, դժբախտաբար, պետք է ասեմ, որ էական հարցեր կան, որտեղ կողմերի դիրքորոշումները դեռեւս բավականին հեռու են միմյանցից»,-հայտարարեց նա: ՔՊ-ականների այս իրարամերժ հայտարարությունները կրկին փաստում են, որ իրականում Նիկոլ Փաշինյանը բանակցային գործընթացի մանրամասները խիստ գաղտնի է պահում իր թիմակիցներից:

ՄԵԾ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

Այսօր՝ սեպտեմբերի 15-ին, Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի վերջին օրն է:

«Ժողովուրդ» օրաթերթն առաջինն էր գրել, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր»-ը քարոզարշավը մտադիր է սահմանափակել մեծ հանրահավաքով, որին մասնակցելու է ողջ իշխանական վերնախավը՝Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Այսօր ՔՊ-ականներն իրենց աջակիցների հետ քայլերթ սկսեցին Էրեբունի թանգարանից դեպի Երեւանի քաղաքապետարան, որտեղ ամփոփիչ հանրահավաք տեղի կունենա: Իշխանությունն արդեն տեւական ժամանակ է՝ պատրաստվում է այդ հանրահավաքին, քաղաքապետարանի շենքի առջեւ մեծ բեմ են հավաքել, որպեսզի ելույթ ունենան: Հանրահավաքին երկար ելույթով հանդես է գալու նաեւ Նիկոլ Փաշինյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանականները ողջ պետական ռեսուրսը կենտրոնացնելու են այդ օրվա հանրահավաքին, ամեն ինչ անելու են, որ մարդաշատ լինի այն, որպեսզի ցույց տան, թե ինչքան բարձր ռեյտինգ ունեն իրենք մայրաքաղաքում:

Պետական ապարատներում աշխատողներն արդեն հրահանգներ են ստացել, որ երեկոյան՝ աշխատանքային ժամից հետո, պարտադիր գան քայլերթի, հետո՝ հանրահավաքի, ավելին՝ աշխատակիցներին հրահանգվել է, որ ոչ միայն իրենք գան, այլ նաեւ մարդիկ բերեն իրենց հետ:

ԿՐԵՄԼԸ ՉԻ ՀԱՍԿԱՆՈՒՄ



Կրեմլը խոստովանել է, որ չի հասկանում հակառուսական պատժամիջոցները երկարաձգելու կամ չեղարկելու՝ Եվրամիության որոշումների տրամաբանությունը:

«Մենք չենք հասկանում ո՛չ բուն պատժամիջոցների տրամաբանությունը, ո՛չ էլ պատժամիջոցների վերացման տրամաբանությունը: Եվ դժվար թե որեւէ մեկը կարողանա բացատրել այդ տրամաբանությունը հենց Եվրոպայում», - ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը :

Նախօրեին հայտնի էր դարձել, որ, Ուկրաինայում տիրող իրավիճակի հետ կապված, Ռուսաստանի քաղաքացիների ու կազմակերպությունների նկատմամբ Եվրամիության սահմանած պատժամիջոցները երկարաձգվել են եւս կես տարով: Այս պահին սեւ ցուցակում է 1800 ֆիզիկական եւ իրավաբանական անձ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին վարչապետի աշխատակազմից հայտնում են, որ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Ֆրանսիայի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ժան-Լուի Բուրլանժին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ վարչապետը կարեւորել է նրա այցը Հայաստան եւ շնորհակալություն հայտնել Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ հարաբերությունների բարեկամության ամրապնդման գործում ներդրման, հատկապես՝ վերջին շրջանում Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամի միջազգային տեսանելիությանը նպաստելու համար: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ ստեղծված իրավիճակին Ֆրանսիայի արձագանքը մեր ժողովուրդների բարեկամության լավագույն արտահայտումներից է: Վարչապետն ընդգծել է, որ Ֆրանսիայի կողմից ուղարկված հումանիտար օգնությունը դեռեւս ԼՂ ժողովրդին չի հասել, եւ բարձր է գնահատել ֆրանսիական կողմի քայլերը:

Ժան-Լուի Բուրլանժը եւս մեկ անգամ ընդգծել է Ֆրանսիայի աջակցությունը Հայաստանին եւ ԼՂ ժողովրդին՝ հաղթահարելու դժվարություններն ու առկա խնդիրները:

Զրուցակիցները քննարկել են Ադրբեջանի կողմից Հայաստանի հետ պետական սահմանի եւ Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծի երկայնքով զորքերի տեղաշարժերի հետեւանքով ստեղծված լարվածությանը, ԼՂ-ում խորացող հումանիտար ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ քայլերին, հայ-ֆրանսիական համագործակցությանը վերաբերող հարցեր:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ արձանագրված պարտավորությունները կապի մեջ չեն ստորագրված կամ հայտարարված որեւէ ուրիշ պայմանավորվածության հետ: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԱԺ-ում կառավարության անդամների հետ հարցուպատասխանին:

Անդրադառնալով հարցին, որ, ՌԴ դիրքորոշմամբ, ԼՂ-ի կարգավիճակը պետք է անորոշ ժամանակով հետաձգվեր՝ Փաշինյանն ասաց, որ այդ առաջարկությունը 2022թ. հուլիսի վերջին, օգոստոսի սկզբին տարածաշրջան էր բերել ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը, ներկայացրել էր եւ Հայաստանին, եւ Ադրբեջանին: «Դրանից հետո ՌԴ ներկայացուցիչը՝ Խովաեւը, տարածաշրջան է եկել 2022թ. սեպտեմբերին՝ ստանալու Հայաստանի եւ Ադրբեջանի արձագանքը: Առաջինը այցելել էր Ադրբեջան, Ադրբեջանում եղել է սեպտեմբերի 11-12-ին, Հայաստան է եկել սեպտեմբերի 13-ին, սեպտեմբերի լույս 13-ի գիշերը Ադրբեջանի ՋՈՒ-ն լայնածավալ հարձակում էր սկսել ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ: ՀԱՊԿ-ը եւ ՌԴ-ն Հայաստանի գրավոր եւ բանավոր դիմումներին՝ կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները, չեն արձագանքել: ՀՀ-ն դրական է արձագանքել ՌԴ առաջարկին, որը ներկայացրել էր Խովաեւը»,-ասաց Փաշինյանը:

Նա հիշեցրեց, որ հոկտեմբերի 6-ին պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Հայաստանն ու Ադրբեջանը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը՝ Ալմաթիի հռչակագրի հիման վրա:

«Այդ որոշումը Հայաստանի Հանրապետությունն ընդունել է սեփական տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նկատառումով, որովհետեւ այն իրավիճակում, երբ Ադրբեջանը գրոհում է Հայաստանի տարածքը ու գրավում է տարածքներ, իսկ Հայաստանի դաշնակիցները լուռ են ու չեն արձագանքում, Հայաստանի Հանրապետությունը պարտավոր էր հոկտեմբերի 6-ին գալ այդ համաձայնությանը՝ սեփական ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը արձանագրելու համար: Նրանք, ովքեր ասում են, որ սա սխալ որոշում է, նրանք ասում են, որ Հայաստանի Հանրապետությունը չպետք է լինի ինքնիշխան պետություն»,- ասաց Փաշինյանը:

Անդրադառնալով հարցին, թե արդյոք կարող է Պրահայի հոկտեմբերի 6-ի համաձայնությունն անմիջական կապ կամ ազդեցություն ունենալ նոյեմբերի 9-ի հայտարարության վրա՝ վարչապետը պատասխանեց, որ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ որեւէ անդրադարձ չկա ԼՂ կարգավիճակին: «Այն պարտավորությունները, որոնք արձանագրված են նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ, ո՛չ ուղղակի, ո՛չ անուղղակի կապի մեջ չեն որեւէ ուրիշ փաստաթղթի, պայմանավորվածության հետ՝ ստորագրված կամ հայտարարված»,- նշեց նա:

Վարչապետն ընդգծեց, որ Հայաստանը, Ռուսաստանն ու Ադրբեջանը չեն հայտարարել, որ նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունն ուժի մեջ չէ: «Ես հայտարարում եմ, որ նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը լիարժեք ուժի մեջ է»,- նշեց վարչապետը:

Նա նկատեց՝ քանի որ նոյեմբերի 9-ի հայտարարությունը ստորագրվել է Ալմաթիի հռչակագրից տասնյակ տարիներ անց, ուրեմն Ալմաթիի հռչակագրին արված որեւէ հղում չի կարող ազդել եռակողմ հայտարարության վրա: «Ավելին ասեմ՝ եթե ԼՂ-ի՝ միջազգային օրենքներով Ադրբեջանի մաս ճանաչելը խոչընդոտ է եռակողմ հայտարարության համար, ուրեմն այդ խոչընդոտը ստեղծել է ՌԴ-ն, որովհետեւ ՌԴ-ն է, որ 2020-ի դեկտեմբերին եւ նոյեմբերին հայտարարել է, որ ԼՂ-ն միջազգայնորեն Ադրբեջանի մաս է»,- ասաց վարչապետը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ԿԼԻՆԻ՞

«Ապրելու երկիր» կուսակցությունն ավագանու ընտրությունների իր քարոզարշավը կեզրափակի քայլերթով եւ մամուլի ասուլիսով: «Ժողովուրդ» օրաթերթը կուսակցության մամուլի քարտուղար Հռիփսիմե Հովհաննիսյանից տեղեկացավ, որ վաղը՝ սեպտեմբերի 15-ին, ամփոփիչ մամուլի ասուլիսով հանդես կգա «Ապրելու երկիր» կուսակցության նախընտրական շտաբի ղեկավար Մեսրոպ Առաքելյանը, այնուհետեւ կուսակցությունը Երեւանում ավտոերթ կանի:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունն էլ ավագանու ընտրությունների քարոզարշավը կեզրափակի բակային այցելություններով:

«Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկացավ քաղաքապետի թեկնածու Դավիթ Խաժակյանից. «Հանրահավաքը եզրափակելու ենք այնպես, ինչպես սկսել ենք՝ բակային հանդիպումներով եւ այցելություններով. առանձնահատուկ բան չունենք կազմակերպած:

Մեծ հանդիպում կազմակերպել էինք նախորդ շաբաթ օրը, հիմա կշարունակենք բակային այցերը»:

Հիշեցնենք, որ այսօր արդեն քարոզարշավի վերջին օրն է. դրան կհաջորդի լռության օրը, իսկ արդեն սեպտեմբերի 17-ին տեղի կունենան Երեւանի ավագանու ընտրություններ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն»-ից սեպտեմբերի 14-ին 9 բուժառու ուղեկցողների հետ միասին անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

«Ժողովուրդ» օրաթերթին այս մասին հայտնում են Արցախի առողջապահության նախարարությունից:

«Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 21 երեխա, 6-ը գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն»-ում ստացիոնար բուժում է ստանում 88 հիվանդ, 4 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որից 3-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

ԴԻՏՈՐԴՆԵՐԸ՝ ԵՐԱՍԽՈՒՄ

Հայաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը կանոնավոր պարեկություն է կատարել Երասխի տարածքում՝ ներառյալ Պողպատի գործարանը՝ հետեւելու անվտանգությանն եւ ռազմական ցանկացած զարգացմանը. այս մասին X-ի պաշտոնական հարթակում հայտնել է ՀՀ-ում ԵՄ առաքելությունը:

«Մեր ներկայությամբ մենք նպաստել ենք ավելի ապահով եւ անվտանգ միջավայրին»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

5.200 ԴՈԼԱՐ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑՈՒՑ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը բացահայտել եւ կանխել է անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվող հերթական հանցավոր խմբի գործունեությունը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արարատի մարզային եւ քննչական գլխավոր վարչությունների ծառայողների իրականացրած համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների ու վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել է անօրինական միգրացիայի կազմակերպման հերթական դեպքը:

Մասնավորապես, նախաքննության ընթացքում կատարված ապացուցողական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում պարզվել է, որ Ա.Մ-ն եւ Ա.Հ-ն նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, մեկ միասնական դիտավորությամբ, շահադիտական նպատակով, միմյանց գործողությունները փոխլրացնելով, Ա.Պ.-ի օժանդակությամբ 2023 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ մի շարք քաղաքացիների անօրինական միգրացիան, այն է՝ «Շենգենյան համաձայնության երկրներ» վերջիններիս մուտքի եւ գտնվելու թույլտվություն ստանալը կազմակերպելու նպատակով նրանցից պահանջել եւ ստացել են յուրաքանչյուրից 5.200-ական ԱՄՆ դոլար գումար:

Այնուհետեւ «Շենգենյան համաձայնության երկրներ» մուտքի եւ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու նպատակով ներկայացվելիք փաթեթներում ներառել են անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրվող, իրավաբանական նշանակության փաստ հաստատող եւ իրավունք վերապահող փաստաթուղթ հանդիսացող՝ բանկային շարժի, աշխատավայրի, եկամուտների չափի, մատնահարդարման դասընթացներ անցնելու վերաբերյալ կեղծ տեղեկանքներ, վկայագիր, որոնք հանձնել են վերը նշված անձանց, որոնք հիշյալ երկրներ մուտքի եւ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու նպատակով դրանք ներկայացրել են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավասու մարմին, որոնց հիման վրա՝ նրանց տրվել են համապատասխան արտոնագրեր՝ այդկերպ՝ հանցավոր խմբի կողմից կեղծ փաստաթղթեր ներկայացնելով, կազմակերպվել է մի շարք անձանց անօրինական միգրացիան:

Նախաքննության ընթացքում խուզարկություններ են կատարվել անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվող հանցավոր խմբի անդամների բնակության հասցեներում եւ տուրիստական կազմակերպություն հանդիսացող աշխատավայրում, որոնց արդյունքում հայտնաբերվել են անօրինական միգրացիայի կազմակերպման դիմաց վճարված գումարներ, կնիքներ, ձեւաթղթեր, սեփականության իրավունքի վկայականներ, աշխատանքի եւ բանկային շարժի վերաբերյալ տեղեկանքներ, ինչպես նաեւ տարբեր անձանց վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր եւ հանցագործության կատարման համար նախատեսված այլ իրեր ու առարկաներ:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ քննիչի միջնորդությամբ հսկող դատախազի կողմից որոշումներ են կայացվել հանցավոր խմբի անդամներից 3-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, նրանցից 2-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, իսկ 1 անձի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, իրականացվում են վարութային գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցավոր խմբի կազմում ներգրավված անձանց ամբողջական շրջանակը պարզելու, նրանց նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելու համար, ինչպես նաեւ անօրինական միգրացիայի կազմակերպման այլ դեպքեր բացահայտելու ուղղությամբ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵՑ

ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման ընթացքում գերմանական Բադեն-Բադեն այցելելու, այդ թռիչքների նպատակն ու պետական միջոցների հնարավոր վատնումը ստուգելու նպատակով հարուցված քրեական գործը կարճվել է. այս մասին հայտնում են Գլխավոր դատախազությունից:

Ներկայացված նյութերում հանցակազմ չի հայտնաբերվել:

Հիշեցնենք՝ դեռեւս 2021 թվականի սեպտեմբերի 15-ին հետաքննություն էր հրապարակվել, ըստ որի՝ Սերժ Սարգսյանը պաշտոնավարման 10 տարիների ընթացքում՝ ամեն տարի, կառավարական օդանավով, պետական միջոցների հաշվին, մեկնել է գերմանական Բադեն-Բադեն քաղաք: Հրապարակման համաձայն՝ Սարգսյանը պաշտոնավարման տասը տարիների ընթացքում գերմանական առողջարանային այդ քաղաք է մեկնել ավելի քան 16 անգամ: Ըստ հետաքննության՝ Սերժ Սարգսյանը ապրիլի 6-ին ու 7-ին դեպի Գերմանիա նախատեսված պաշտոնական այցն օգտագործել է կրկին Բադեն-Բադեն այցելելու համար:

ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ՔԱՂԱՔԱՑՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչության հանձնումների եւ դատական հանձնարարությունների բաժնի պետ Անուշ Ռշտունին սպառնացել է քաղաքացուն «առյուծների փայ դարձնել»:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն ահազանգել է փաստաբան Տիգրան Ստեփանյանը՝նշելով, որ սեպտեմբերի 5-ին Երեւան քաղաքի վարչական շրջաններից մեկում տեղի ունեցած խնամակալության եւ հոգաբարձության խորհրդի նիստից հետո Ա. Ռշտունին վիրավորանքներ եւ սպառնալիքներ է հնչեցրել իր վստահորդի հասցեին:

Փաստաբանը իրավասու անձանց ուշադրությունը հրավիրում է պետական պաշտոնյային ոչ վայել վարքագծի վրա: Իսկ թե կոնկրետ որն է եղել կոնֆլիկտի թեման, փաստաբանը հրաժարվեց մանրամասնել՝ նշելով, որ դա վերաբերում է իր վստահորդի անձնական կյանքին, եւ իրավասու չէ մանրամասներ ներկայացնել:

Մեզ չհաջողվեց կապ հաստատել փաստաբանի վստահորդի հետ, սակայն Արդարադատության նախարարության մեր աղբյուրը հայտնեց, որ Անուշ Ռշտունին ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Միհր Սեդրակյանի սանիկն է, որն ունի առյուծներ, եւ հավանաբար հենց նրա առյուծներով էլ Ա. Ռշտունին սպառնում է քաղաքացուն:

Նշենք, որ Ռշտունին եղել է երդվյալ ՀՀԿ-ական մինչ հեղափոխությունը, սակայն դա չխանգարեց, որ հեղափոխությունից հետո հարմար դիրքավորվի պետական համակարգում եւ անգամ կարիերայի աճ ունենա ՀՀ արդարադատության նախարարությունում՝ գտնելով նոր հենարաններ եւ օգտվելով նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների բարձր հովանավորությունից:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՎԻՃԱԲԱՆԵԼ ԵՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Երեւանում հնչած կրակոցներից ու դանակահարությունից: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վիճաբանել են նույն շենքի հարեւանները, իսկ, ահա, թեման եղել է ավտոտնակի հարցը:

Սկզբում հարեւանները դանակահարել են միմյանց, որից հետո հնչել են կրակոցներ: Նշենք, որ shamshyan.com-ը գրել էր,որ սեպտեմբերի 14-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 12:30-ի սահմաներում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել, որ Նորաշեն 44 շենքի բակում ծեծկռտուք է տեղի ունեցել:

Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, դեպքի վայրում ոստիկաններն ու պարեկները հայտնաբերել են արնանման հետքեր, ատրճանակի 1 պարկուճ, իսկ դեպքի վայրի հարեւանությամբ հայտնաբերվել է Лада 110 մակնիշի ավտոմեքենա, եւ կան կասկածներ, որ նշված ավտոմեքենան կապ ունի տեղի ունեցած միջադեպի հետ: Ոստիկանությունը պարզել է նաեւ, որ նշված վայրից 2 դանակահարված քաղաքացի տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Դեպքի վայրում հավաքված քաղաքացիները նշել են, որ տեղի է ունեցել վիճաբանություն, ծեծկռտուք, որի ժամանակ հնչել են կրակոցներ, ու 2 հոգու՝դանակահարված, շտապօգնության ավտոմեքենան տեղափոխել է հիվանդանոց. նրանք հարազատ եղբայրներ են:

Իրավապահները պարզում են վիրավորումներ ստացած քաղաքացիների ինքնությունը, այն, թե ով է հայտնաբերված ավտոմեքենայի սեփականատերը, ինչպես նաեւ կազմակերպում են միջոցառումներ դեպքի հանգամանքները, մասնակիցների ինքնությունը պարզելու, նրանց եւ հանցագործության գործիք ատրճանակը հայտնաբերելու ուղղությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՆԽՎԵԼ Է ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 14-ին՝ ժամը 12:56-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ քաղաքացին ցանկանում է ինքնասպանություն գործել՝նետվելով Երեւանի Կիեւյան կամրջից:

Հայաստանի Հանրապետության ՆԳՆ փրկարար ծառայությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ եւ հոգեբանական աջակցության բաժնի հերթապահ հոգեբանը:

Մինչ փրկարարների՝ կանչի վայր հասնելը տեղի ուժերով կանխվել է Հ. Գ.-ի (ծնված 2000 թ.) ինքնասպանության փորձը. վերջինս տեղափոխվել է Ոստիկանության Մաշտոցի բաժին:

Հոգեբանը Հ. Գ.-ին տեղում ցուցաբերել է հոգեբանական աջակցություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 64 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍՊԱՌՆՈՒՄ Է ՓԱԿԵԼ

Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան էջում՝ մարզպետ Հայկ Ղալումյանի կողմից անցկացված աշխատանքային նիստի վերաբերյալ հրապարակման տակ, «Բագրատաշեն, նոր կյանք» անունով օգտատերը, որպես նյութի մեկնաբանություն, վերջնագիր է ներկայացրել: Նա մասնավորապես գրել է. «Որեւէ գումար մի՛ հատկացրեք, հատկապես՝ Տավուշի մարզպետին. նրանք գործ չեն անում: Երկրորդ տարին է, ինչ խնդրում ենք Պտղավան գյուղի դպրոց տանող ճանապարհը գոնե շիբինապատեն: Մեկն ասում է՝դաշտամիջյան է, չենք անելու, այնինչ բնակելի նոր թաղամաս է, նշված փողոցով երեխաները դասերի են հաճախում ցեխի ու փոշու միջոցով, ավելին՝ անձրեւների ժամանակ այն անանցանելի է, բազում մեքենաներ են թաղվում եւ փչանում: Խոսքը Պտղավանի 15 փողոցի մասին է: Եթե այն չսարքվի, ստիպված ենք լինելու փակել եւ այդ ճանապարհը, եւ դեպի Բագրատաշենի մաքսակետ տանող ճանապարհը: Հարգելի՛ կառավարություն, դուք ժամանակ տվեք եւ հետամուտ եղեք եւ թույլ մի՛ տվեք մեր համբերությունը չարաշահել, հարգելով կառավարությանը՝այս օրվանից 10 օր էլ կիամբերենք, հակառակ դեպքում մենք զերծ ենք պատասխանատվությունից»:

ԴԱՀԼԻՃԸ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը սեպտեմբերի 5-ին որոշում է ընդունել, որով որոշել է «թույլատրել Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից «Մարզպետարանի շենքի դահլիճի վերանորոգման» աշխատանքների ձեռքբերումը կատարել մեկ անձից՝ «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ն մասի 2-րդ կետի հիման վրա»: Բարվոք վիճակում գտնվող մարզպետարանի դահլիճի նորոգման ի՞նչ հրատապ անհրաժեշտություն առաջացավ սեպտեմբերին, ինչո՞ւ նախկինում մարզպետարանի դահլիճի նորոգման աշխատանքների մրցույթ չի հայտարարվել:

ԳՐՔԵՐԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Դիլիջանի քաղաքային գրադարանը տեղակայված էր Մշակույթի պալատի վերջին հարկում, տանիքի անձրեւաջրերն ու ձյան հալոցի ջրերը թափվում էին գրքերի վրա, անձրեւաջրերը լցվում էին գրադարանի մի հատվածը: Գրադարանի աշխատողները գրքերը ջրերից պաշտպանելու համար ծածկում էի պոլիէթիլենային տոպրակներով, ձմռանը խոնավ գրքերը չորացնում էին վառարանների մոտ, իսկ ամռանը՝ օդափոխում: Դիլիջանի Մշակույթի պալատը վերանորոգման մեջ է, հոկտեմբերին կլրանա նորոգման մեկ տարին: Գրադարանի գրքերը, պարկերի մեջ լցված, գտնվում են Մշակույթի պալատի առաջին հարկում գտնվող դահլիճում: Գրադարանի 13 աշխատողները 11 ամիս հարկադիր պարապուրդի մեջ են, որի համար աշխատավարձի 2/3 մասն են ստանում: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հայտնեց, որ Մշակույթի պալատը վերանորոգում է «Արտդիանշին» ՍՊԸ-ն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՀՍՏԱԿԵՑՎԻ

ԿԱՆԱՆՑ՝ ԲԱՆԱԿ ԶՈՐԱԿՈՉՎԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կառավարությունը լրացումներ եւ փոփոխություններ է կատարել կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած իգական սեռի քաղաքացիների վերաբերյալ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի դրույթներում զորակոչի անցկացման գործընթացում այդ քաղաքացիների մասով իրականացվող գործողությունները հստակեցնելու նպատակով:

Ըստ հիմնավորման՝ օրենքում կատարված լրացումների եւ փոփոխությունների արդյունքում սահմանվել են կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած իգական սեռի քաղաքացիների զորակոչի կազմակերպման գործընթացը, դիմումների ներկայացման ժամկետները, պարտադիր զինվորական ծառայության զորակոչման առանձնահատկությունները, զորակոչելու կամ պարտադիր զինվորական ծառայության ոչ ենթակա ճանաչելու պայմանները եւ նման որոշում կայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, զորակոչված իգական սեռի զինծառայողների ծառայության կազմակերպման պայմանները, որի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան կարգավորումներ նախատեսել որոշման մեջ:

Թեմայի առնչությամբ Նիկոլ Փաշինյանը պարզաբանել է, որ իգական սեռի ցանկացած քաղաքացի կարող է կամավոր ժամկետային վեց ամսվա ծառայության որոշում կայացնել եւ համապատասխան այդ որոշումը փաստաթղթավորել, բայց զորակոչվելուց հետո վեց ամսվա ծառայությունը դառնում է պարտադիր: Եվ սա կարեւոր սկզբունք է, որպեսզի եւ՛ որոշում կայացնողը որոշում կայացնելիս լրջորեն քննարկի, դիտարկի, եւ՛ նաեւ Պաշտպանության նախարարությունը կարողանա որոշակի հաշվարկներ անել, թե ինչ ռեսուրսներ են պետք այդ նպատակի համար:

Նիկոլ Փաշինյանը հայտնել է նաեւ, որ Պաշտպանության նախադրությունն ավարտին է հասցնում կանանց գումարտակի համար նախատեսված մշտական տեղակայման վայրի վերակառուցման աշխատանքները. «Մենք հասկանում ենք, որ սա բոլորովին նոր ինստիտուտ է Հայաստանի Հանրապետության համար, եւ ամեն ինչ անում ենք, որպեսզի բոլոր առումներով փորձենք այս ծառայությունը զրոյից ստեղծել՝ ցանկացած հնարավոր ամենապատշաճ մակարդակով: Իհարկե, առաջիկայում նաեւ տեղում կլինենք, աշխատանքների ընթացքին կծանոթանանք, որպեսզի ամեն ինչ մեր ուզածով ընթանա»:

Սուրեն Պապիկյանն էլ հայտնել է, որ կանանց առաջին զորակոչը նախատեսվում է 2024 թ. ձմռանը, բայց հիմնական ակնկալիքը լինելու է ամառային զորակոչը:

ԱՐՑԱԽ

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՑԸ՝ ԿՏՐՈՆՆԵՐՈՎ

«Ս.թ. սեպտեմբերի 14-ից Ստեփանակերտ քաղաքում կմեկնարկի հացի կտրոնների տրամադրման 2-րդ փուլը, որը կտեւի երկու օր». այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Արցախի սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունից:

«Կտրոն ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթի բնօրինակով եւ հանրային ծառայությունների համարանիշով ներկայանալ կտրոնների տրամադրման այն կետը, որտեղից առաջին փուլի ընթացքում տվյալ ընտանիքը ստացել է հացի կտրոնները»:

Ըստ աղբյուրի՝ յուրաքանչյուր ընտանիքից կարող է ներկայանալ մեկ չափահաս անձ՝ ստանալով ամբողջ ընտանիքի անդամների կտրոնները: Ընտանիքի մյուս անդամների փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտություն չկա, բացառությամբ այն դեպքերի, եթե տեղի է ունեցել ընտանիքի անդամի ավելացում:

Այդ պարագայում ներկայացվում են նաեւ վերջինիս փաստաթղթերը:

«Կտրոնները կտրամադրվեն հետեւյալ կետերում՝ համապատասխան նշված ժամանակացույցի. համար 6, 7, 9, 12 դպրոցներ, ԱՀ բնակարանային հարցերի կոմիտե (Ազատամարտիկների փ. 39) եւ ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարության վարչական շենք (Ազատամարտիկների փ. 54)՝ ժամը՝ 09:30-18:30, համար 2, 5, 10 դպրոցներ՝ ժամը 12:00-18:30: Կտրոնների տրամադրման կետերը կաշխատեն՝ համաձայն տվյալ հասցեներում էլեկտրաէներգիայի հովհարային անջատման գրաֆիկի:

Ստացած կտրոններին անհրաժեշտ է վերաբերվել խնամքով, քանի որ կորցրած կամ վնասված կտրոնի դիմաց նոր կտրոն չի հատկացվի:

Հացի վաճառքի, ինչպես նաեւ տվյալ օրն իրացման ենթակա կտրոնների համարների վերաբերյալ տեղեկատվությունը կհաղորդենք հավելյալ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ստեփանակերտ քաղաքում փաստացի բնակվող յուրաքանչյուրի համար նախատեսված է կտրոն, այդ պատճառով մեր քաղաքացիներին հորդորում ենք հերթերում պահպանել արժանավայել կարգուկանոն՝ նպաստելով գործընթացի արագ կազմակերպմանը», - տեղեկացնում են Արցախի սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունից:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 10-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑԻՆ

Հայաստանի կառավարությունը հինգշաբթի կայացած նիստում հավանություն է տվել ԱՊՀ-ում փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման միջազգային կենտրոնի (ICOR) ստեղծման մասին համաձայնագրին:

Համաձայնագիրը մշակվել է Անկախ Պետությունների Համագործակցությանը մասնակցող երկրների ֆինանսական հետախուզության գործակալությունների ղեկավարների խորհրդի կողմից:

«Համաձայնագրի նպատակն է խթանել համագործակցությունը ԱՊՀ անդամ երկրների միջեւ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, անդրազգային ռիսկերի գնահատման ապահովման, ինչպես նաեւ տեղեկատվական համագործակցության արդյունավետության մակարդակի բարձրացման ոլորտում»,- ասվում է հիմնավորման մեջ:

Նշվում է, որ պայմանագրով ստացված տեղեկատվությունը չի կարող փոխանցվել երրորդ անձանց, առանց այն տրամադրող կողմի համաձայնության:

Կենտրոնին տեխնիկական, կազմակերպչական եւ տեղեկատվական աջակցություն կտրամադրվի Ռուսաստանի Դաշնության ֆինանսական մոնիտորինգի դաշնային ծառայության կողմից:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԻՏՈՐԴՆԵՐ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսի ինը հոգանոց պատվիրակությունը 2023 թվականի սեպտեմբերի 15-18-ը դիտորդական առաքելություն կիրականացնի Երեւանի 12 շրջանում սեպտեմբերի 17-ին կայանալիք ավագանու ընտրություններին: Այդ մասին նշված է Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքում:

«Մինչեւ ընտրությունների օրը Կառլա Դեջոնգի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ կունենա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային կառավարման նախարարության եւ Արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ:

Նախատեսված են նաեւ հանդիպումներ Կոնգրեսում Հայաստանի պատվիրակության, դիվանագիտական կորպուսի անդամների, ինչպես նաեւ տեղական եւ միջազգային ՀԿ-ների եւ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Պատվիրակությունը մտքեր կփոխանակի ընտրություններում առաջադրված քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների եւ թեկնածուների հետ:

Ընտրությունների օրը Կոնգրեսի յոթ թիմ պատահականության սկզբունքով կտեղակայվի Երեւանի բոլոր 12 շրջաններում ընտրատեղամասերում ընտրական ընթացակարգերին հետեւելու համար:

Նախնական եզրակացություններով հայտարարությունը պատվիրակության ղեկավարը կհրապարակի Կոնգրեսի կայքում 2023 թվականի սեպտեմբերի 18-ին»,- հայտնել են Եվրոպայի խորհրդից:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԿՐՄԱՆ ԱԱՀ-Ն ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԳՈՐԾԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Կառավարությունը հավանություն է տվել «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին, որով նախատեսվում է եւս մեկ տարով՝ մինչեւ 2025 թ. հունվարի 1-ը երկարաձգել էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների ներկման համար սահմանված ավելացված արժեքի հարկի արտոնությունը:

Ըստ հիմնավորման՝ 2021-2022 թթ. ընթացքում տեղադրվել եւ ներկայումս հանրապետության տարածքում կիրառվում են 100 լիցքավորման կայաններ, որոնց միջոցով հնարավոր է լիցքավորել միաժամանակ 150 էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոց: Նախագծի ընդունմամբ նպաստավոր պայմաններ կստեղծվեն երկրում էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ձեռք բերումն ու շահագործումը խթանելու, արդեն իսկ արձանագրված դրական արդյունքների շարունակականության ապահովման, մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցման համար: Էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների քանակի զգալի աճը կնպաստի նաեւ դրանց շահագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների (լիցքավորման կայաններ, վերանորոգման կետեր եւ այլն) զարգացմանը լրացուցիչ ներդրումների եւ նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով:

Ինչպես նշել է էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արմեն Խոջոյանը, երկու տարիների ընթացքում աճել է էլեկտրական շարժիչով տրանսպորտային ներմուծման ծավալները: «Մասնավորապես, 2022 թվականին, 2021 թվականի համեմատ, էլեկտրական շարժիչով մեքենաների ներմուծման ծավալն աճել է 1,8 անգամ, իսկ 2020 թվականի համեմատ՝ շուրջ 12 անգամ: Էլեկտրական շարժիչով մոտոցիկլետների եւ մոպեդների ներմուծման ծավալը 2022 թվականին, 2021 թվականի համեմատ, աճել է 3,8 անգամ»,- ասել է փոխնախարարը:

«Ուրախությամբ պետք է արձանագրել, որ ՀՀ-ում էլեկտրոմոբիլների նկատմամբ ընկալումն աճում է, եւ սա լավ լուր է: Ուրախությամբ պիտի արձանագրեմ նաեւ, որ Երեւանում պարեկային ոստիկանությունն օգտագործում է էլեկտրական շարժիչով ավտոմեքենաներ: Մենք լարված հետեւում էինք, թե ինչ կասեն մեր ոստիկաններն այդ մեքենաների գործունեության մասին: Պետք է ասեմ, որ շատ դրական արձագանք ունեն: Ուրախությամբ պետք է արձանագրեմ նաեւ, որ արդեն Երեւանում առաջին էլեկտրական ավտոբուսն է դուրս եկել երթուղի, եւ ՀՀ-ում շատ քաղաքացիներ օգտվում են այդ տրանսպորտի միջոցից»,-ասել է վարչապետը՝ հավելելով, որ եթե Պարեկային ծառայության հետ անհամատեղելիության խնդրահարույց հարցեր չծագեն, ապա Երեւանի պարեկային ոստիկանության համար հետագայում ձեռք կբերվեն միայն էլեկտրական շարժիչով մեքենաներ, որից հետո՝նաեւ մարզերի համար:

Հավելենք, որ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն այդ համատեքստում կարեւորել է, որ դրանով կրիտիկական քանակ կձեւավորվի, եւ ենթակառուցվածքային հարցեր կլուծվեն: «Ոլորտում առկա խնդիրներից է ուտիլիզացիան, որը բարդ է: Մենք անվերջ չենք կարող սա թողել արտոնյալ ռեժիմ: Ես կարծում եմ՝ մենք 2024 թվականին արտոնության միջոցով կրիտիկական քանակ կունենաք, ինչը կխթանի ենթակառուցվածքների ձեւավորումը, որովհետեւ էլեկտրական մեքենաներն առանց ենթակառուցվածքների արդյունք չեն տալիս: Մենք կարող ենք հայտնվել մի իրավիճակում, որ ամբողջ աշխարհն ուտիլիզացման ենթակա մեքենաներն ուղարկի ՀՀ: Մենք ուշադիր հետեւելու ենք դրան, որ նման բան տեղի չունենա: Եթե զգանք, որ տեղի է ունենում, անմիջապես կարգավորումներով կզսպենք: Ամփոփելով՝ ուզում եմ ասել, որ դեռեւս 2024 թվականը կլինի լայնամասշտաբ արտոնության տարի, որից հետո կարգավորումներով բոլոր հարցերը կլուծենք»,- ասել է Մհեր Գրիգորյանը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԿԱՆՑԿԱՑՎԻ

2023թ. հոկտեմբերի 26-29-ը Երեւանում կանցկացվի FINTECH360 միջազգային համաժողովը, որին կմասնակցեն տարբեր երկրների առաջատար բանկերի, վճարային համակարգերի, ֆինտեխ կազմակերպությունների, ստարտափների, մասնագիտացված ասոցիացիաների ավելի քան 150 ներկայացուցիչներ: Փորձագետները կքննարկեն ֆինանսական ոլորտի թվային վերափոխման միտումները եւ առաջադեմ տեխնոլոգիաները, ինչպես նաեւ նորարարությունները բիզնեսում արդյունավետ ինտեգրելու լավագույն փորձը:

Համաժողովն անցկացվում է «Յունիբանկ» ԲԲԸ-ի եւ Kwikpay միջազգային վճարային համակարգի աջակցությամբ Holiday Inn Yerevan Republic Square հյուրանոցում:

FINTECH360 ծրագրում ներառված են ելույթներ եւ պանելային քննարկումներ ամենաարդիական թեմաներով՝

- Հաճախորդների թվային պրոֆիլներ: Ինչպե՞ս է onboarding-ը լուծում թվային բիզնեսի խնդիրները,
- Հաճախորդների հավատարմության կառավարում, բանկային էկոհամակարգեր եւ BNPL ծառայություններ,
- Մոբայլ հավելվածներ՝բրոքերային ծառայությունների եւ ներդրումների համար,
- Open Banking եւ Open API,
- Կիբերանվտանգություն եւ անձնական տվյալների պաշտպանություն,
- Միջսահմանային դրամական փոխանցումներ եւ վճարումներ. նոր ռազմավարություններ,
- Ինչպե՞ս է Web 3.0-ն ազդում թվային հասանելիության վրա: Բլոկչեյն եւ NFT շուկաների զարգացումը,
- e-Commerce. հիմնական շարժիչ ուժը եւ աճի հեռանկարները,
- ESG եւ անցում դեպի կանաչ ֆինանսներ, climate finance,
- Թվային բանկ ՓՄՁ-ների համար:

Այս տարի Հայաստանը նշում է դրամի 30-ամյակը, եւ համաժողովի ընթացքում տարբեր երկրներից ժամանած մասնակիցներին կներկայացվի նաեւ ազգային արժույթի ստեղծման, ներդրման եւ զարգացման պատմությունը:

Համաժողովի ծրագիրն ավանդաբար ներառում է գործնական եւ ժամանցային մասերը: Մասնակիցներին սպասվում են հետաքրքիր ուղեւորություններ Հայաստանի տեսարժան վայրեր եւ, իհարկե, ազգային ճաշատեսակների համտեսում: Մշակութային ծրագրում ներառված է նաեւ հայտնի երգիչ Վալերի Մելաձեի ելույթը համաժողովի գլխավոր հովանավոր «Յունիբանկ»-ի 22-ամյակի տոնակատարությանը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՖԻԼՄ

ՀԱՅԿԱԿԱՆԸ՝ «ՕՍԿԱՐ»-Ի ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆԸ

Շատ շուտով Արման Նշանյանի պրոդյուսերական՝ People of Ar Production-ի եւ Անի Ոսկանյանի՝ Ava Production-ի համատեղ ստեղծած ֆիլմը՝ «Ամերիկացի»-ն, կներկայացնի Հայաստանը «Օսկար» մրցանակաբաշխությանը: Ֆիլմի ռեժիսորը «Էմմի» եւ «Ոսկե գլոբուս»-ի արժանացած Մայքլ Գուրջյանն է:



«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ֆիլմի պրոդյուսեր Արման Նշանյանի հետ՝ ֆիլմի ստեղծման, բարձրացրած թեմայի եւ այլնի մասին. «Սկսեմ նրանից, որ վերջին տարիներին ես եւ իմ գործընկեր Անի Ոսկանյանը շատ լավ ֆիլմերով ենք ներկայացրել Հայաստանը միջազգային հարթակներում. դրանցից են «Սողոմոնի երգերը», «Երբ քամին կանգնի» եւ Իննա Սահակյանի Aurora's Sunrise ֆիլմերը:

Ի տարբերություն մեր նոր՝ «Ամերիկացի» ֆիլմի՝ այս երեք ֆիլմերն ավելի շատ ունեն քաղաքական ուղղվածություն՝ կոնկրետ Հայաստանում կատարված եւ կատարվող դեպքերի մասին, իսկ, ահա, «Ամերիկացի»-ն բարձրացնում է համամարդկային թեմա, ավելի կոնկրետ՝ այն վերջին հույսը չկորցնելու մասին է, որը հատուկ է բոլոր ազգերի մարդկանց, եւ որը կարող է պատահել ցանկացած երկրում: Սրա արդյունքում կարծում եմ, որ այն մեծ շանսեր ունի «Օսկար» մրցանակաբաշխությանը մրցանակ ստանալու համար»,- նշեց Արման Նշանյանը:

Խոսելով «Ամերիկացի» ֆիմի որակի մասին՝ պրոդյուսերը նկատեց, որ ֆիլմի որակը, թեման եւ բուն ասելիքը նույնիսկ չեն քննարկվում:

«Մենք ունենք մեծ, հզոր թիմ, որի աշխատանքի շնորհիվ ֆիլմն այսօր Ամերիկայի ավելի քան 50 նահանգներում ցուցադրվում է, մեր մեծ թիմի արդյունքում է, որ «Ամերիկացի» ֆիլմն արդեն 14-ից ավելի լուրջ մրցանակներ ունի աշխարհի տարբեր կինոփառատոներում: Այս ամենի շնորհիվ է, որ ֆիլմն աչքի է ընկել «Օսկար»-ի անձնակազմի մոտ եւ այսօր հավակնում է «Օսկար»-ի մրցանակի»:

«Ամերիկացի» ֆիմը պատմում է ցեղասպանությունից հրաշքով ողջ մնացած եւ Միացյալ Նահանգներ գաղթած հայ երիտասարդի՝ Չարլիի մասին, ում ընտանիքը, ցավոք, այդ ոճրագործության զոհն էր դարձել: Պատմությունը սկսվում է 1947թ., երբ Չարլին վերադառնում է Հայաստան եւ բախվում խորհրդային կոմունիզմ կոչվող դաժան իրականությանը: Հայաստանում Չարլիին անմիջապես ձերբակալում են եւ դատապարտում ազատազրկման: Իրավիճակի ամբողջ լրջությունն ու սարսափը գիտակցելու հետ մեկտեղ, Չարլին պատահմամբ հայտնաբերում է, որ իր բանտախցի արտաքին պատը վնասվել է երկրաշարժի հետեւանքով՝ առաջացնելով մի ճեղք, որի միջով նա կարողանում է տեսնել մոտակա շենքի բնակարաններից մեկը, որտեղ ապրում էր մի ամուսնական զույգ՝ Տիգրանն ու Ռուզանը: Նրանք էլ դառնում են Չարլիին արտաքին աշխարհի հետ կապող միակ օղակը: Չարլին սկսում է հետեւել ամուսնական զույգի կյանքին, ճաշել, ուրախանալ, տխրել, երգել ու պարել նրանց հետ միաժամանակ, փորձում ճանաչել հայկական մշակույթը, որը մինչ այդ անծանոթ էր իրեն:

Հավելենք, որ «Օսկար» ամենամյա մրցանակաբաշխությունը տեղի կունենա մարտի 10-ին, իսկ անվանակարգերը կհայտարարվեն 2024 թվականի հունվարի 23-ին:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ՄԿՆԵՐԸ՝ Disney–ՈՒՄ

Նյու Յորքում (ԱՄՆ) Disney ստուդիայի գլխավոր գրասենյակը գրավել են մկներն ու լուերը:

Սեպտեմբերի 11-ին շենքի աշխատակիցները շտապ տարհանման ծանուցում են ստացել կրծողների եւ միջատների ներխուժման պատճառով:

«Ճգնաժամային մենեջմենթի եւ կառավարման ընկերությունները տեղյակ են այս խնդիրների մասին եւ աշխատում են դրանց լուծման ուղղությամբ: «Այս կապակցությամբ խնդրում ենք անհապաղ լքել ձեր աշխատանքային տարածքները հինգերորդ հարկում»,- ասված է հաղորդագրության մեջ:

Շենքի այն հատվածը, որտեղից տարհանվել են աշխատակիցները, զբաղեցնում է Disney-ի գովազդային բաժինը: Հայտնի չէ, թե աշխատակիցները երբ կկարողանան վերադառնալ իրենց աշխատանքին:

Disney-ն իր գործունեությունն է ծավալում Մանհեթենի մեծ գրասենյակային շենքում 1995 թվականից, երբ ստուդիան գնեց այնտեղ գտնվող ABC հեռուստատեսային ցանցը:

ՄՐՑՈՒՅԹ՝ ԱՃՈՒՐԴՈՒՄ

Քիմ Քարդաշյանն ու Լորեն Սանչեսը երկար տարիների ընկերներ են, սակայն վերջերս 42-ամյա ռեալիթի հեռուստաաստղը եւ Ջեֆ Բեզոսի 53-ամյա ապագա կինը բախվել են բարեգործական աճուրդի ժամանակ արժեքավոր լոտի համար. հայտնում է DailyMail.com-ը:

Հայտնի կանայք միմյանց դեմ մրցել են Kering Foundation-ի Caring for Women ընթրիքի ժամանակ Նյու Յորքի The Pool-ում: Աճուրդի ժամանակ Քիմն առաջարկել է խաղադրույք կատարել Balenciaga's Couture Experience-ի վրա, բայց Լորենը նույնպես ցանկանում էր գնել այս լոտը: Նրանք երկուսն էլ, ի վերջո, մի ողջ հարստություն են ծախսել:

Սանչեսը, Քիմի դիմաց նստած, մեկ այլ սեղանի շուրջ շարունակում էր գումարը բարձրացնել: Քիմը հետեւել է նրա օրինակին: Գինն, ի վերջո, հասավ 200 000 դոլարի: Երկու կանայք էլ որոշել են գնել լոտը, ինչը նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրը կներդնի 200.000 դոլար: Միեւնույն ժամանակ Քիմի սեղանին մեկ այլ մարդ խաղադրույքին ավելացրել է 200 հազար դոլար:

Ի վերջո, այս մեկ լոտն ընդհանուր առմամբ 600,000 դոլար է բերել բարեգործական ընկերություններին: Աճուրդից ստացված հասույթը կուղղվի Malala Fund-ին, Ընտանեկան բռնությանը վերջ դնելու ազգային ցանցին եւ Նյու Յորքի Սեռական բռնության դեմ պայքարի դաշինքին: 15 տարի շարունակ Kering հիմնադրամը աշխատում է կազմակերպությունների հետ, որոնք օգնում են արմատախիլ անել բռնությունը եւ բարելավել զոհերի կյանքը:

Միջոցառումը համանախագահում են Սալմա Հայեկ Պինոն եւ նրա ամուսին Ֆրանսուա-Անրի Պինոն:

ՍՊՈՐՏ

«ԲԱՐՍԵԼՈՆԱ»-Ի ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնան» մտադիր է ձեռք բերել անգլիական «Մանչեսթեր Սիթիի» նորվեգացի հարձակվող Էրլինգ Հոլանդին. հաղորդում է 90min-ը:

Կատալոնական ակումբի ղեկավարությունն արդեն սկսել է մշակել ծրագիր, որը թույլ կտա 2025թ. ամռանը գնել 23-ամյա ֆուտբոլիստի տրանսֆերը 174 միլիոն եվրոյով: Մանչեսթերյան ակումբի հետ Էրլինգ Հոլանդի պայմանագրով նախատեսված է այդքան հրաժարագին երկու տարի հետո:

Ընթացիկ մրցաշրջանում Էրլինգ Հոլանդը կատալոնացի Խոսեպ Գվարդիոլայի գլխավորած թիմի հետ մասնակցել է 6 հանդիպման, խփել է 6 գոլ, կատարել 1 գոլային փոխանցում:

ՄԲԱՊԵՆ՝ ՎԵՐԱՏԻԻՆ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 24-ամյա ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեն սոցիալական ցանցերում արած գրառումով դիմել է ՊՍԺ-ից Քաթարի «Ալ Արաբի» տեղափոխված 30-ամյա իտալացի կիսապաշտպան Մարկո Վերատիին:

«Բացառիկ խաղացող եւ մարդ: Պատիվ էր քեզ հետ այսքան տարի խաղալը: Մեծ հաճույք էր: Քո ժամանակն այս ակումբում երբեք չեն մոռանա եւ չեն անտեսի: Իմ տեսած լավագույն ֆուտբոլիստներից մեկը: Շնորհակալ եմ, ի՛մ ընկեր, կկարոտեմ քեզ»,- գրել է Մբապեն:

ՊՍԺ-ն Վերատիի տրանսֆերից ստացել է 45 միլիոն եվրո: Նա փարիզյան ակումբում էր հանդես գալիս 2012 թվականից:

ՏՆԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի որոշմամբ՝ Աբովյան եւ Արմավիր քաղաքների ստադիոններում հանդես գալու հնարավորությունից զրկված Հայաստանի փոխչեմպիոն Երեւանի «Փյունիկը» հաջորդ տնային հանդիպումը կանցկացնի Գյումրիի «Շիրակի» ստադիոնում: Այդ մասին ռուսական championat.com-ին հայտնել է «Փյունիկի» նախագահ Արթուր Սողոմոնյանը:

«Բոլոր ազատ ստադիոնները պատկանում են Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային: Մենք ունենք հնարավորություն խաղալ միայն այլ ակումբների ստադիոններում, եթե նրանք համաձայնություն տան: Շնորհակալություն Գյումրիի «Շիրակին», որը թույլ է տվել, եւ մենք հաջորդ տուրի հանդիպումը կանցկացնենք նրանց տնային ստադիոնում: Բայց մենք ստիպված ենք լինելու խաղալ Երեւանից մոտ 200 կմ հեռու: Հասկանալի է, որ երկրպագուները չենք կարողանա մասնակցել, քանի որ հեռու է: Շատ բարդ իրավիճակ է: Սա Ֆեդերացիայի գիտակցված որոշումն է դուրս թողնել լեգենդար ակումբը Հայաստանի առաջնությունից: Կարծում եմ՝ այս ամենից հետո «Փյունիկը» կդադարեցնի գոյությունը: Բարդ կլինի»,- ասել է Արթուր Սողոմոնյանը: Հայաստանի Պրեմիեր լիգայի 7-րդ տուրում «Փյունիկը» սեպտեմբերի 16-ին կընդունի Երեւանի ԲԿՄԱ-ին: 6 խաղից հետո Եղիշե Մելիքյանի գլխավորած թիմը 14 միավորով առաջին տեղում է:

● *Սեպտեմբերի 16-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերոնիկան որոշում է մեռնել» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՎԻԶԱ

ՀԱՐՑ. Ո՞րն է Շենգենի վիզայի եւ ազգային վիզայի միջեւ տարբերությունը:

Գայանե Առաքելյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շենգենյան վիզան (C տեսակ) տրվում է Շենգենի գոտու անդամ երկրներից որեւէ մեկի կողմից եւ վավեր է Շենգենյան երկրներում կարճ ժամանակահատվածով մնալու համար՝ սահմանափակված մինչեւ 90 օր 180 օրվա ընթացքում:

Եվրոպական օրենսդրությամբ այդպիսի վիզաների ստացումը եւ թողարկումը կատարվում է նպատակավայրի երկրի հյուպատոսության կողմից: Մի քանի Շենգենյան երկրներ ճամփորդելու դեպքում հիմնական նպատակավայրը որոշվում է ճամփորդության նպատակով կամ մնալու տեւողությամբ: Շենգենյան երկրում մնալու ծառայողական պատճառները գերակշիռ են դրա՝ այլ երկիր զբոսաշրջության, ընտանեկան կամ մասնավոր հիմքով այցելություններ նկատմամբ:

«Թիկէէնկոնտակտ» ընկերություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ազգային երկարաժամկետ վիզան (D տեսակ) վավեր է միայն վիզա տրամադրող երկրում հաստատվելու կամ ավելի քան 90 օր մնալու համար: Ազգային վիզան, այնուամենայնիվ, թույլ է տալիս տարանցել այլ Շենգեն երկրների միջով, եւ որոշների համար (Իտալիայի քաղաքացու երկարակյաց ամուսին, աշխատողներ, ուսանողներ կամ այցելուներ) այն նաեւ թույլ է տալիս ազատորեն ճամփորդել Շենգեն գոտու ողջ տարածքում:

ԿՈՌՈՒՊՑԻԱ

ՀԱՐՑ. Ի՞նչ է իրենից ներկայացնում Կոռուպցիայի ընկալման համաթիվը:

Ջոհրաբ Սայադյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Թրանսփարենսի ինթերնեշնլ»-ի (ԹԻ) Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) գնահատում եւ դասակարգում է պետություններ/տարածքները՝ ելնելով այն բանից, թե երկրի հանրային ոլորտը (պետական եւ համայնքային մարմիններ) որքանով է ընկալվում որպես կոռումպացված: Այն բաղադրյալ համաթիվ է, որը ստացվում է իրենց բնագավառներում ճանաչում ունեցող մի շարք կազմակերպությունների կողմից անցկացված հարցումների եւ գնահատումների՝ կոռուպցիային առնչվող տվյալների համադրությամբ:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ»

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ԿԸՀ-ն կոռուպցիայի վերաբերյալ աշխարհում ամենից լայնորեն գործածվող ցուցանիշն է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Արցախում

Արցախում համաճարակի վտանգ կա: Անահիտ Արզումանյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ Արցախում ոչ միայն հացի ու սննդամթերքի խնդիր կա, այլ նաեւ համաճարակի վտանգ: Դիզվառելիքի բացակայության պատճառով արդեն մի քանի օր է՝ մայրաքաղաքում աղբահանություն չի իրականացվում: Քաղաքի տարբեր հատվածներում աղբի կույտեր են գոյանում, ու գարշահոտությունը տարածվում է հարակից տարածքներում: Բացի այդ, մի քանի օր հաց չունենալու խնդրին որպես լուծում կրկին մեկնարկել է հացի կտրոններ տրամադրելու գործընթացը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+4 +9 +19 +21
Կոտայքի լեռներ	+4 +8 +17 +20
Կոտայքի նախալեռներ	+11 +14 +19 +24
Գեղարքունիք	+4 +8 +16 +20
Լոռի	+5 +9 +19 +22
Տավուշ	+7 +12 +22 +25
Արագածոտնի լեռներ	+4 +8 +16 +20
Արագածոտնի նախալեռներ	+11 +14 +21 +25
Արարատ	+13 +16 +25 +27
Արմավիր	+12 +15 +24 +27
Վայոց ձորի լեռներ	+4 +7 +17 +21
Վայոց ձորի նախալեռներ	+12 +15 +23 +26
Սյունիքի հովիտներ	+14 +17 +18 +21
Սյունիքի նախալեռներ	+8 +12 +14 +18
ԼՂՀ	+14 +17 +18 +21
Երեւան	+10 +12 +23 +25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*